

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» № 483-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի կատարման վերաբերյալ

1. 2017 թվականի ընթացքում մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամային սպորտի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի № 38 արձանագրային որոշմամբ:

2. 2017 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում պետական աջակցության շրջանակում իրականացվել են հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

1) Հուլիսի 18-30-ը Թուրքիայի Սամսուն քաղաքում «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպությունը մասնակցել է խուլերի 23-րդ ամառային սուրդլիմպիկ խաղերին: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ներկայացված է եղել 10 խուլ մարզիկներով՝ 1 ձյուդոյիստ և 9 ըմբիշ (ընդհանուր՝ 18 մարդ):

Մրցապայքարում հանդես եկող հայ մարզիկները նվաճել են 5 մեդալ՝ 1 բրոնզե և 4 արծաթե:

Ձյուդո մարզաձևում հանդես եկող Ռոբերտ Գևորգյանը (60 կգ քաշային կարգ) դարձել է արծաթե մեդալակիր: Ժորա Գրիգորյանը (71 կգ քաշային կարգ) հունա-հռոմեական ոճում նվաճել է բրոնզե մեդալ՝ գրավելով 3-րդ տեղը, նույն ոճում հանդես եկող Արարատ Սարգսյանը (75 կգ քաշային կարգ) և Նարեկ Նիկողոսյանը (80 կգ քաշային կարգ) դարձել են բրոնզե մեդալակիր՝ գրավելով 3-րդ տեղը: Ազատ ոճի ըմբիշ Սարգիս Սարգսյանը (57 կգ քաշային կարգ) դարձել է բրոնզե մեդալակիր:

2) Սեպտեմբերի 7-9-ը և 14-16-ը Երևան քաղաքի խուլերի մշակույթի պալատի մարզադահլիճում անցկացվել են Հայաստանի Հանրապետության հունա-հռոմեական և ազատ ոճի ըմբշամարտի առաջնությունները, որոնց մասնակցել են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի 42-ական խուլ մարզիկներ:

3) Նոյեմբերի 9-12-ը Երևան քաղաքի խուլերի մշակույթի պալատի մարզադահլիճում անցկացվել է խուլ մարզիկների Հայաստանի Հանրապետության ֆուտզալի առաջնությունը: Առաջնությանը մասնակցել են 63 խուլ մարզիկներ, որոնք հանդես են եկել 6 թիմերով՝ Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերից և Երևան քաղաքից:

4) Հունիս-հուլիս ամիսներին Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում իրականացվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի առաջին փուլը: Մրցույթի 2-րդ՝ եզրափակիչ փուլը, անցկացվել է օգոստոսի 27-30-ը Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում: Մրցույթին մասնակցել են լսողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ և մտավոր

սահմանափակումներ ունեցող անձինք: Մրցույթն անցկացվել է 7 մարզաձևերից՝ բասկետբոլ, սեղանի թենիս, շախմատ, լող, շաշկի, դարթս, եռամարտ մտավոր սահմանափակումներ ունեցող անձանց համար և եռամարտ լողական խնդիրներ ունեցող անձանց համար: Մրցույթին մասնակցել է 192 մարդ: Մրցույթի մասնակիցները պարգևատրվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի վկայագրերով, մեդալներով և դրամական մրցանակներով:

5) Հուլիսի 17-22-ը Կոտայքի մարզի Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում անցկացվել է «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի շրջանակում անցկացվող անվասայլակով հաշմանդամ ունեցող ընտանիքների համար մրցույթի եզրափակիչ փուլը:

Հուլիսի 18-ից մասնակցել են Հայաստանի Հանրապետության 10 մարզերի, Երևան քաղաքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սայլակով տեղաշարժվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց 23 ընտանիքներ՝ թվով 69 մարդ:

Մրցույթն անցկացվել է 7 մրցաձևերից՝ խաղային փոխանցավազք (30 մ), վարժություն բասկետբոլի գնդակով, խաղային փոխանցավազք թենիսի գնդակներով, խաղային փոխանցավազք (80 մ), օղակներով նետումներ նշանակետին, հավաքիր «ՀԱՂԹԱՆԱԿ» բառը:

Միջոցառման մասնակից ընտանիքի կազմում հաշմանդամություն ունեցող ընտանիքները պարգևատրվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի վկայագրերով, դրամական մրցանակներով, ինչպես նաև ընտանիքների երեխաներին հանձնվել են նվերներ:

6) Հուլիսի 24-ից մինչև օգոստոսի 7-ը Երևանում անցկացվել է Հայաստանի կույր շախմատիստների տղամարդկանց անհատական եզրափակիչ առաջնությունը, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի և Երևան քաղաքը ներկայացնող առաջին և երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող 16 կույր շախմատիստներ, ընդամենը՝ 26 մարդ (10 ուղեկցորդ):

7) Նոյեմբերի 15-17-ը Երևանում «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպությունը անցկացրել է «Համաեվրոպական ֆուտբոլի շաբաթ» ծրագրով ֆուտբոլի հանրապետական առաջնությունը: Առաջնությանը մասնակցել են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի և Երևան քաղաքի 7 հատուկ դպրոցների աշակերտներ: Յուրաքանչյուր թիմ ներկայացրել է 12-15 տարեկան 8 մարզիկի: Մրցումներին մասնակցել է 80 մարդ:

### **3. Հովանավորչական միջոցներով անցկացվող միջոցառումներ**

1) Հունիսի 26-ին «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոնում անցկացվել է ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառում: Միջոցառմանը մասնակցել են մտավոր խնդիրներ ունեցող 45 երեխաներ:

2) Սեպտեմբերի 28-ին Երևանի լողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի մարզադահլիճում անցկացվել է ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումը՝ «Սպորտլանդիա» մարզական խաղերը: Մարզական խաղերին մասնակցել են լողության խանգարումներ ունեցող 20 երեխաներ: